



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ՅԻՍԱՆԱԿԻ ՎԵՅԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2017

| | | |
|--------------------------|----|---|
| Կիրակնօրեայ Ընթերցումներ | Էջ | 1 |
| Նոր Արարածը | Էջ | 2 |
| Ծանուցում | Էջ | 4 |

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(51.15-52.3)

Այսպէս կ'ըսէ Տէրը.- «Ես, ես եմ քու Տէր Աստուածդ որ ծովը կը խռովեմ եւ ալիքները կը յուզեմ. ԱՄԵՆԱԿԱԼ ՏէՐ է իմ անունս: Իմ պատգամներս պիտի պատմես դուն. քեզ պիտի պահպանեմ ձեռքիս տակ որով երկինքը հաստատեցի եւ երկրին հիմերը դրի, եւ Սիոնին պիտի ըսեմ.- Իմ ժողովուրդս ես դուն»: Արթնցի՛ր, արթնցի՛ր եւ ոտքի՛ կանգնէ, Երուսաղէ՛մ, դուն՝ որ Տիրոջ բարկութեան բաժակը խմեցիր իր ձեռքէն, կործանումի եւ սրտամտութեան բաժակը ցմրուր քամեցիր: Ծնած որդիներէդ ո՛չ մէկը մնաց քեզ մխիթարելու համար. մեծցուցած զաւակներէդ ո՛չ մէկը մնաց օգնութեան ձեռք երկարելու համար քեզի: Զոյգ չարիքներ քեզ հարուածեցին, - ո՞վ պիտի ցաւակցի քեզի- երկիրդ կործանեցաւ եւ աւերուեցաւ, բնակիչներդ սովէն ու սուրէն կոտորուեցան. - ո՞վ քեզ պիտի մխիթարէ-: Զօրութենէ պարպուած քու զաւակներդ փողոցներու անկիւնները ինկած պառկած են թակարդի մէջ բռնուած յամոյրի պէս, Տիրոջ բարկութենէն գինովցած, Աստուծոյ յաղիմանութենէն շփոթահար:

Ուստի լսէ՛, ո՞վ դժբախտ, որ առանց գինիի հարբած ես: Այսպէս կ'ըսէ Տէր Աստուածդ, քու Աստուածդ, ժողովուրդիդ պաշտպանը.- «Ահա ձեռքէդ կ'առնեմ կործանումի բաժակը, իմ սրտամտութեանս բաժակը, որմէ պիտի չխմես այլեւս, եւ զայն կու տամ քեզ կեղեքողներուն եւ նախատողներուն ձեռքը, անոնց՝ որոնք քեզի կ'ըսէին. “Խոնարհէ՛ որ վրայէդ անցնինք”, եւ դուն մէջքդ գետնին կը հաւասարեցնէիր որպէսզի անոնք անցնին վրայէն»: Արթնցի՛ր, արթնցի՛ր, Սիոն. եւ զօրութիւնդ զգեցիր, Սիոն. փառաւոր հագուստներդ հագուէ Երուսաղէ՛մ, սո՛ւրբ քաղաք, որովհետեւ պիղծերն ու անթլիփատները այլեւս պիտի չմտնեն քու դռներէդ: Թօթափէ՛ փոշիդ, ե՛լ նստէ, քակէ՛ պարանոցիդ կապերը ո՞վ Երուսաղէմ, Սիոնի գերի աղջիկ, որովհետեւ այսպէս կ'ըսէ Տէրը.- «Ինչպէս ձրի վաճառուեցաք, այնպէս ալ ձրի պիտի փրկուիք»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԵՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

(13.18-25)

Աղօթեցէ՛ք մեզի համար, որովհետեւ համոզուած ենք թէ մեր խիղճը մաքուր է, եւ կ'ողբենք ամէն բանի մէջ ուղիղը գործել: Մանաւանդ կ'աղաչեմ որ աղօթէք ինծի համար, որպէսզի կարենամ աւելի շուտ ձեզի վերադառնալ:

Թող խաղաղութեան Աստուածը ձեզի կարողութիւն տայ ամէն տեսակի բարեգործութեամբ իր կամքը կատարելու,

որովհետեւ ինքն էր որ մեռելներէն
յարուցանեց մեր Տէր Յիսուս Քրիստոսը,
ան՝ որ իր արիւնով կնքուած յաւիտենական
ուխտով Հուլուապետ եղաւ ամբողջ հօտին:
Թող ինչ որ հաճելի է Աստուծոյ՝ ներգործէ
մեր մէջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ, որուն
փա՛ռք յաւիտեանս: Ամէն:

Եղբայրներ, կ'աղաչեմ որ լսէք այս
կարճ նամակով տուած յորդորներս:
Կ'ուզեմ որ գիտնաք թէ մեր եղբայրը՝
Տիմոթէոս բանտէն արձակուած է հիմա:
Եթէ շուտով մօտս գայ, միասին կու գանք
ձեզ տեսնելու:

Ողջոյններս հաղորդեցէք ձեր բոլոր
առաջնորդներուն եւ բոլոր հաւատացեալ-
ներուն: Իտալիոյ եղբայրները կ'ողջունեն
ձեզ:

Աստուծոյ շնորհքը բոլորիդ հետ ըլլայ:
Ամէն:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(22.24-30)**

Աշակերտներուն մէջ վէճ ծագեցաւ
թէ իրենցմէ ո՞վ պիտի նկատուի
մեծը: Յիսուս անոնց ըսաւ. «Ազգերու
թագաւորներ կը տիրեն իրենց ժողո-
վուրդներուն վրայ եւ իշխողները բարերար
կը կոչուին իրենց հպատակներուն կողմէ:
Բայց ձեր պարագային այդպէս պէտք չէ
ըլլայ: Ընդհակառակը, ձեր մէջէն ամենէն
մեծը թող ամենէն պզտիկին պէս ըլլայ,
եւ առաջնորդը՝ սպասաւորին պէս: Ո՞վ
է մեծը. սեղան նստո՞ղը թէ սպասաւորը:
Անշուշտ որ սեղան նստողը: Բայց ես ձեր
մէջ սպասաւորի պէս եմ: Դուք միշտ քովս
մնացիք փորձութիւններու ընթացքին. եւ
ես ահա կը խոստանամ թագաւորութիւն
տալ ձեզի, ինչպէս Հայրս ինձի տալ
խոստացաւ: Իմ սեղանէս պիտի ուտէք եւ
խմէք իմ թագաւորութեանս մէջ, եւ պիտի
բազմիք գահերու վրայ՝ դատելու համար
Իսրայէլի տասներկու ցեղերը»:

ՆՈՐ ԱՐԱՐԱԾԸ

ՓՕԼ ԹԻԼԼԻՒ
ԹՎՈՂԱՒ. ԳՈՒՆԻԿ ԱԲ. Բ. Գ.

«Կարելորը մարդու թլփատուած կամ անթլփատ ըլլալը չէ,
այլ նոր արարած ըլլալը»,
Գղ 6.15:

Եթէ մեր ներկայ ժամանակին համար ինձմէ
խնդրուէր քրիստոնէական պատգամը երկու բառով
ամփոփել, Պօղոս առաքեալի հետ պիտի ըսէի, թէ
անիկա Նոր Ստեղծագործութեան պատգամն է:

Նոր Ստեղծագործութեան մասին կարգացած ենք
Պօղոս առաքեալի Բ. Կորնթացիներու նամակին մէջ:
Անոր նախադասութիւններէն մէկը՝ ճշգրիտ թարգ-
մանութեամբ կրկնեմ. «Եթէ ոեւէ մէկը Քրիստոսի
հետ միութեան մէջ է՝ նոր արարած է. իրերու հին
վիճակը անցած հեռացած է. իրերու նոր վիճակ մըն է
[այժմ]» Բ. Կր 5.171:

Քրիստոնէութիւնը պատգամն է Նոր Ստեղծագոր-
ծութեան, Նոր Արարածին, Նոր Իրականութեան,
որ երեւցած է Յիսուսի յայտնութեամբ, եւ որ այս
պատճառով, ու միայն այս պատճառով՝ կոչուած
է Քրիստոս: Քանզի ան է Քրիստոսը, Մեսիան,
ընտրեալն ու օծեալը, որ կը բերէ իրերու նոր վիճակը:
Մենք ամէնքս կ'ապրինք իրերու հին վիճակին մէջ,
եւ մեր քաղածէն մեզի ուղղուած հարցումը սա է,
թէ մենք եւս մասնակի՞ց ենք իրերու նոր վիճակին:
Մենք Հին Ստեղծագործութեան կը պատկանինք, եւ
քրիստոնէութեան մեզի ուղղած կոչը այն է, որ մե՛նք
ալ մասնակցինք Նոր Ստեղծագործութեան: Մենք
մեզ ճանչցած ենք մեր հին լինելութեամբ, եւ այժմ
մենք մեզի հարց պէտք է տանք, թէ մենք ալ Նոր
Արարածի փորձառութիւն ունեցա՞ծ ենք մեր մէջ:

Ի՞նչ է այս Նոր Արարածը:

Պօղոս առաքեալ այս հարցումին նախ կը պա-
տասխանէ ըսելով՝ թէ ինչ չէ: Անիկա ոչ թլփատութիւն
է, ոչ անթլփատութիւն է, կ'ըսէ ան: Պօղոս առաքեալի
եւ իր նամակը կարգացողներուն համար, ասիկա շատ
յստակ միտք մը կ'արտայայտէր: Կը նշանակէր, թէ
ո՛չ հրեայ ըլլալը եւ ո՛չ ալ հեթանոս ըլլալը կարելոր
է ի վերջոյ. միակ կարելորը միութիւնն է Անոր հետ,
որուն մէջ է Նոր Իրականութիւնը:

Թլփատութիւնը կամ անթլփատութիւնը ի՞նչ
կը նշանակեն մեզի համար: Անոնք կրնան որոշ
բան մը նշանակել, բայց նաեւ շատ տիեզերական
նշանակութիւն մը կրնան ունենալ: Սա ըսել է, թէ չկայ
կրօնք՝ որ Նոր Արարած կ'արարէ: Թլփատութիւնը

կրօնական ծէս մըն է, որ հրեաները կը պահէին. զոհերը կրօնական ծէսեր էին, որ հեթանոսները կը պահէին. մկրտութիւնը կրօնական ծէս մըն է, որ քրիստոնեաները կը պահեն: Այս ամբողջ ծէսերը չեն կարեւորը, այլ Նոր Ստեղծագործութիւնն է կարեւորը: Արդ, համաձայն Պօղոս առաքեալի, քանի այս ծէսերը կը գրաւեն տեղը իրենց ներկայացուցած կրօնքին ամբողջութեան, ապա կրնանք ըսել, թէ որեւէ կրօնք կարեւոր չէ, այլ միայն իրերու նոր վիճակը:

Մտածենք Պօղոս առաքեալի այս ուշադրաւ հաստատումին վրայ: Ինչ որ կ'ըսէ այն է, թէ քրիստոնէութիւնը աւելին է քան կրօնք մը. անիկա պատգամն է Նոր Ստեղծագործութեան: Քրիստոնէութիւնը իբրեւ կրօնք կարեւոր չէ. անիկա նման է թլփատութեան կամ անթլփատութեան, ո՛չ աւելի եւ ո՛չ պակաս: Արդեօք կարո՞ղ ենք երեւակայել առաքելական յայտարարութեան հետեւանքները մեր կացութեան համար: Քրիստոնէութիւնը ներկայ աշխարհին մէջ թլփատութեան եւ անթլփատութեան զանազան կերպերու առջեւ է: Այսօր թլփատութիւնը կրնայ նշանակել ամէն ինչ որ կրօնք կոչուած է, անթլփատութիւնն ալ՝ ամէն ինչ որ աշխարհային է, բայց կիսակրօնական պնդումներ կը կատարէ: Քրիստոնէութեան քով մեծ կրօնքներն են. հնդկականութիւնը, իսլամութիւնը եւ մնացորդները դասական յուդայականութեան: Անոնք ունին իրենց առասպելներն ու ծէսերը, այսպէս ըսած՝ իրենց «թլփատութիւն»ը, որ գանոնք կը տարբերէ միւսներէն: Կան աշխարհային շարժումներ. ցեղակրօնութիւնը (fascism) եւ համայնավարութիւնը (communism), աշխարհային մարդկայնականութիւնը (secular humanism), եւ բարոյագիտական գաղափարապաշտութիւնը (ethical idealism): Անոնք կը փորձեն վանել առասպելներն ու ծէսերը, եւ կը ներկայացնեն, այսպէս ըսած՝ անթլփատութիւնը: Այսուհանդերձ, անոնք նաեւ կը յաւակնին իւրացուցած ըլլալ բացարձակ ճշմարտութիւնը, եւ կատարեալ նուիրում կը պահանջեն: Քրիստոնէութիւնը ինչպէ՞ս պիտի կանգնի անոնց դիմաց: Պէ՞տք է անոնց ըսէ. «Մեզի միացէք, մենք աւելի լաւ կրօնք ենք, թլփատութեան կամ անթլփատութեան մեր տարբերակը աւելի բարձր է քան ձեր տարբերակը: Պէ՞տք է գովաբանէք իստոնէական մեր կենսակերպը, թէ՛ կրօնականը եւ թէ՛ աշխարհականը: Պէ՞տք է որ քրիստոնէական պատգամը յաջող պատումի մը վերածենք, եւ նման ծանուցանողներու անոնց ըսենք, որ մեր հետ փորձեցէք զայն եւ պիտի տեսնէք, թէ՛ որքան կարեւոր է քրիստոնէութիւնը բոլորին համար: Կարգ մը միսիոնարներ եւ կարգ մը քարոզիչներ եւ աշխարհական մարդիկ այս ընթացքը ունին: Անոնք քրիստոնէութեան կատարեալ անհասկացողութիւն մը ցոյց կու տան: Առաքեալը որ

միսիոնար էր եւ քարոզիչ էր եւ աշխարհական էր միաժամանակ՝ կ'ըսէ ուրիշ բան մը: Ան կ'ըսէ. Չկայ կրօնք մը որ աւելի կարեւոր է քան ուրիշ մը. ո՛չ մերը, ո՛չ ալ ձերը: Բայց կ'ուզեմ ձեզի ըսել, թէ բան մը եղաւ որ կարեւոր է, բան մը որ կը դատէ ձեզ եւ զիս, ձեր կրօնքը եւ իմ կրօնքը: Նոր Ստեղծագործութիւն յառնած է, Նոր Արարած յայտնուած է. եւ մենք հրաւիրուած ենք անոր հաղորդակից ըլլալու: Այս է որ ըսելու ենք հեթանոսներուն եւ հրեաներուն, երբ անոնց հանդիպինք: Մի՛ բաղդատէք ձեր կրօնքը եւ մեր կրօնքը, ձեր ծէսերը եւ մեր ծէսերը, ձեր մարգարէները եւ մեր մարգարէները, ձեր քահանաները եւ մեր քահանաները, եւ մեր բարեպաշտներն ու ձեր բարեպաշտները: Այս ամէնը անօգուտ են: Եւ ամէն ինչէ վեր, մի՛ մտածէք, թէ մենք կ'ուզենք ձեզ կրօնափոխ դարձնելով՝ անգլիական կամ ամերիկեան քրիստոնէութեան, կամ արեւմտեան աշխարհի կրօնքին բերել: Մենք չենք ուզեր ձեզ կրօնափոխ դարձնելով մեզի միացնել, ոչ իսկ՝ մեզմէ լաւագոյններուն: Ասիկա ապարդիւն ճիգ մը պիտի ըլլար: Միայն կ'ուզենք ձեզի ցոյց տալ մեր տեսածը եւ պատմել մեր լսածը, թէ՛ հին ստեղծագործութեան մէջտեղը Նոր Ստեղծագործութիւն մը կայ, եւ թէ՛ այս Նոր Ստեղծագործութիւնը յայտնուած է անձովը Յիսուսի, որ կոչուած է Քրիստոս:

Եւ երբ ցեղակրօններու կամ համայնավարներու, գիտական մարդկայնականներու եւ բարոյագիտական գաղափարապաշտներու հանդիպինք, պէտք է ըսենք անոնց. «Շատ մի՛ պարծենաք, թէ՛ դուք ծէսեր եւ առասպելներ չունիք, թէ՛ դուք զերծ էք աւելորդապաշտութիւններէ, թէ՛ դուք կատարելապէս տրամաբանական էք, եւ ամէն առումով՝ անթլփատ: Նախ եւ առաջ, դուք եւս ձեր ծէսերն ու առասպելները ունիք, թլփատութիւն մըն ալ: Ու անիկա նոյնիսկ ձեզի համար շատ կարեւոր է: Բայց եթէ դուք կատարելապէս ազատ ըլլայիք անկէ՝ պատճառ մը պիտի չունենայիք ձեր անթլփատութիւնը յայտարարելու: Անօգուտ է: Մի՛ խորհիք, թէ՛ կ'ուզենք ձեզ հեռացնել ձեր աշխարհայնութենէն՝ դարձի բերելով միացնել կրօնայնութեան մը, թէ՛ կ'ուզենք ձեզ կրօնասէր դարձնել եւ անդամ՝ շատ բարձր կրօնքի մը՝ քրիստոնէութեան, եւ անոր մէկ շատ մեծ յարանուանութեան, այսինքն՝ մերինին: Ասիկա ապարդիւն ճիգ մը պիտի ըլլար: Մենք միայն կ'ուզենք ձեզի հաղորդել փորձառութիւն մը, որ մենք ունեցած ենք, թէ՛ աշխարհի մէջ այստեղ ու այնտեղ, եւ մեր մէջ հիմա ու ետքը Նոր Ստեղծագործութիւն մը կայ, լայնօրէն թաքուն, սակայն մերթ՝ բացայայտ, եւ ստուգապէս յայտնուած անձովը Յիսուսի, որ կոչուած է Քրիստոս:

Այս է եղանակը, որով պէտք է խօսինք բոլոր անոնց՝ որոնք քրիստոնէութենէն դուրս կը գտնուին, անոնք կրօնասէր ըլլան թէ՛ աշխարհային:



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
2018

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Յ Ց

Ա Մ Ա Ն Ո Ր

Երկուշաբթի, 1 Յունուար 2018
ՄԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ
Առաօտեան ժամը 10:00-ին
ՄԿԻԶԲ ՍՈՒՐԲ ՊԱՍԱՐԱԳԻ
Ժամը 11:00-ին

Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Ց

Ուրբաթ, 5 Յունուար 2018
ՄԿԻԶԲ ԱՍՏՈՒԿՍՏՇՆՉԱԿԱՆ
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐՈՒ
Երեկոյեան ժամը 5:30-ին
ապա
Ժամը 6:30-ին
ՍՈՒՐԲ ՊԱՍԱՐԱԳ

Տօն Ծննդեան Յիսուս Քրիստոսի

Շաբաթ, 6 Յունուար 2018
ՄԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ
Առաօտեան ժամը 9:30-ին

ՍՈՒՐԲ ՊԱՍԱՐԱԳ

Առաօտեան ժամը 11:00-ին

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ: ՁԵԶԻ, ՄԵԶԻ ՄԵԾ ԱԻԵՏԻՍ:

ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ

ՀՈԳԵՀԱՆԳԻՄՏ

Յաւարտ Մ. Էս Անմահ Պատարագի

Կիրակի, 7 Յունուար 2018-ին
Սկիզբ Պատարագի ժամը 11:00-ին
Սկիզբ Հոգեհանգիստի ժամը 12:30-ին

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրինք փափաքող ընտանիքները
թող բարեհաճին դիմել Հովիւին
Տ. Գառնիկ Ա. Քեյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 909 5203 թիւին:

Սիրելի հայորդի,
Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան
և Աստուածայայտնութեան տօնին առիթով,
նուիրատուութեամբ (Բողոքին) մասնակցե՛լ
եկեղեցոյ առաքելութեան:

Կանխայայտ Շնորհակալութեամբ՝
ՀՈՎԻԻ ԵՒ ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՆ

Եւ շատ մտահոգ պէտք է ըլլանք քրիստոնէական կրօնքին համար, եկեղեցիներու վիճակին համար, անդամագրութեան եւ վարդապետութիւններու համար, հաստատութիւններու համար, եկեղեցականներու, քարոզներու եւ Խորհուրդներու համար: Այս ամէնը թլփատութիւնն են: Իսկ անոր չըլլալը, այսինքն՝ աշխարհայնացումը, որ այսօր ամբողջ երկրագունդին վրայ կը տարածուի՝ անթլփատութիւնն է: Երբ գերագոյն հարցումը դրուի, այսինքն՝ Նոր Իրականութեան հարցումը, երկուքն ալ ոչինչ են, որեւէ կարեւորութիւն չեն ներկայացներ: Այս հարցումը, ի դէպ, անսահման կարեւորութիւն ունի: Պէտք է որ անոր համար աւելի տոչորուինք քան երկնքի ու երկրի միջեւ որեւէ այլ երեւոյթի կամ իրի համար: Նոր Ստեղծագործութիւնը — ասիկա է մեր գերագոյն նպատակը: Ասիկա պէտք է ըլլայ մեր անսահման կիրքը — անսահման կիրքը ամէն մարդէ հակի: Ասիկա է կարեւորը. ասիկա միայն կարեւոր է բացարձակապէս: Անոր բաղդատաբար, նոյնիսկ կրօնքը կամ արտակրօնքը, նոյնիսկ քրիստոնէութիւնը կամ արտաքրիստոնէութիւնը՝ շատ քիչ կարեւոր են — եւ ի վերջոյ, ոչ մէկ նշանակութիւն ունին:

Եւ հիմա թող քիչ մը պարծենամ այն իրողութեամբ, որ մենք քրիստոնէաներ ենք, եւ թող պարծենալով անմիտ դառնանք, ինչպէս Պօղոս առաքեալ ինքզինք համարած է, երբ սկսած է պարծենալ²: Քրիստոնէութեան մեծութիւնն է, որ կրնայ ինքզինք տեսնել, թէ որքան փոքր է: Քրիստոնէայ մը ըլլալուն կարեւորութիւնը այն է, որ կրնանք տոկալ գաղափարին՝ թէ իբրեւ կրօնք կարեւոր չէ անիկա: Կրօնքին ներքին զօրութիւնն է, որ հոգեւոր մարդը ի վիճակի կը դարձնէ անվախօրէն նայելու կրօնքին ունայնութեան: Քրիստոնէական հասկացողութեան ամենահասուն պտուղն է իմանալը՝ թէ քրիստոնէութիւնը իբրեւ կրօնք անօգուտ է: Ասիկա պարծենալ է, բայց ոչ թէ անձի պարծենալ, այլ պարծենալ՝ վասն քրիստոնէութեան: Իբրեւ պարծենալ՝ անմտութիւնն է: Բայց պարծենալ թէ ոչինչ կայ պարծենալով՝ իմաստութիւնն եւ հասունութիւնն է: Ունենալը՝ իբրեւ չունենալ — ասիկա ճիշդ կեցուածքն է կեանքին մէջ ամէն ինչի նկատմամբ որ մեծ է ու գեղեցիկ, նոյնիսկ կրօնքին եւ քրիստոնէութեան պարագային: Սակայն Նոր Ստեղծագործութեան նկատմամբ ճիշդ կեցուածքը չէ: Անոր նկատմամբ ճիշդ կեցուածքը խանդավառ կ'ըլլայ եւ անսահմանօրէն տենչացող:

(Շարունակելի 1)

ԾԱՆՕԹԱԳՐԱԿԱՆ

1.- ՆԱԹ՝ «Ոեւէ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլեւ չէ՝ այն՝ ինչ որ էր նախպէս, որովհետեւ ամբողջութեամբ նորոգուեցաւ», Բ. Կր 5:17:

2.- Տե՛ս Բ. Կր 11:17: